ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Վարդիթեր Սարգսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Վարդիթեր Սարգսյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 6-րդ ա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Արմինե Գուլամերյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Արմինե Գուլամերյանը:

Որոշեցին. - 6-րդ ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Արմինե Գուլամերյան /նախագահ/
2. Սյուզաննա Գինոսյան /անդամ/
3. Աբրահամյան Ռուզաննա /անդամ/
4. Գայանե Գալստյան /անդամ/
5. Արմինե Հովասափյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Վարդիթեր Սարգսյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական

պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Դասղեկ Վարդիթեր Սարգսյանը նշեց, որ դասարանում տղաները հաճախ կռիվներ մեջ են լինում՝ առաջացնելով լուրջ կարգապահական խնդիրներ,անհանդուրժող են, խտրականություն են դնում : Ուստի խնդրեց ծնողներին, որ ուշադրության կենտրոնում պահեն նմանատիպ վարք դրսևորող աշակերտներին , համագործակցեն դասղեկի հետ, հաճախակի զրույցներ ունենան տղաների հետ:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Արմինե Գուլամերյան
Քարտուղար՝ Սյուզաննա Գինոսյան